

Յ. Գ. Զայս նամակ ետու թարգմանել 'ի բարբառ
Հայոց՝ առ 'ի ցուցանել Ձեզ թէ ծանօթ եմք լեզուին
Ձերոյ, և 'ի կիր արկանեմք զայն 'ի գէղս :

Այլ մինչդեռ 'ի Կոստանդինուպօլիս էր տակաւին Գրի-
գոր Պատրիարք՝ սլատահեցաւ դարձեալ վէճ 'ի մէջ Հայ
և Լատին միաբանաց, 'ի տաճարին Ս. Յարութեան վասն
Իւղաբերից սեղանոյ՝ եւ յեկեղեցին Բեթղեհէմի. և միա-
բանք գրեալ ազգ արարին Գրիգորի՝ որ ինչ եղեւն, եւ
նա ծանոց Դեսպանին Գաղղիոյ մտերիմ բարեկամին իւ-
րոյ, իսկ նա էառ զիր նախ 'ի Գրիգոր Պատրիարքէ՝ զի
սիրով վարեացին իւրքն ընդ Լատին կրօնաւորս, և ապա
գրեաց ինքն սլատուէր և սաստ մեղմով առ Տեսուչ և Փո-
խանորդն Լատին վանաց՝ չվիճել եւ չկուռիլ ընդ Հայս,
այլ վարիլ ըստ բնական սովորութեան, թէ 'ի Ս. Յարու-
թեան եւ թէ 'ի Բեթղեհէմ, եւ չառնել հակառակ ինչ
ընդդէմ կանոնաց : Զայս զիր ետ ցԳրիգոր Պատրիարք, և
նա գրեաց առ Գաբրիէլ, Թէոփորոս և Յովհաննէս վար-
դապետս՝ եղեալ 'ի միջի զգիր Դեսպանին և զթարգմա-
նութիւն նորին, սլատուիրելով նոցա և ինքն յամենայնի
սիրով վարիլ ընդ նոսա՝ և չտալ տեղի առեւութեան, և
թէ Դեսպանն և տիկինն նորին, ո՞րքան սիրով և խաղա-
ղութեամբ վարեցան անդ ընդ Գրիգորի, և ո՞րչափ աչ-
խատ եղեն 'ի հանել զԽաթիթի Շէրիֆն՝ եւ այլ բազում
գովութիւնս գրեաց զԴեսպանէն, խրատ և յորդորական
բանս առ վարդապետս, ապա սլատուիրէ նոցա՝ զի ին-
քեանք ձեռօք իւրեանց տարեալ մատուցեն զգիր Դես-
պանին առ Փոխանորդն Լատինաց, և սիրով հաշտեցին
ընդ նոսա, (1740. 'ի 6 Մայիսի) :

Եւ 'ի սմին ժամանակի՝ յորում իսկապէս լուծաւ խն-
դիրն, և տուաւ Կայսերական հրովարտակ Հայոց և Յու-
նաց, դարձեալ ծախեցան 'ի դրունս գումարք գրամոց,
եւ Գրիգոր Պատրիարք վերստին անկաւ 'ի ներքոյ պար-
տուց եւ յաւուրս Աղուհացից՝ տեսեալ զաղքատութիւն
նորա՝ շարժեցան 'ի գուլթ սեղանաւորք և համայն արհես-
տաւորք ազգին և ետուն ողորմութիւն առատ, որ և շքր-
լեցաւ նա յամենայն եկեղեցիս քաղաքին, յորէ անախ մեծի